Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի
որակավորման հանձնաժողովի
«08»12 2017թ. թիվ 8 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դեպարտամենտի պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2018թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը, ժամկետները և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը՝ հետևյալ ոլորտներում. քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայությունը, գործավարությունը, վարչարարությունը, գաղտնիության ռեժիմի պահպանումը, արխիվային գործը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում, հոգեբանություն, քրեական դատավարության և քրեական իրավունքի ընդհանուր դրույթներ:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 32 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով (ներառյալ՝ 4 օր դասընթացները) և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

6. Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ միասնական քննությամբ:

7. Ծառայողների վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2018 թվականի մարտ-ապրիլ ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IS-J-019-18	ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցեր	6
2.	IS-G-026-18	Գործավարությունը, վարչարարությունը, գաղտնիության ռեժիմի պահպանումը, արխիվային գործը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում	14

3.	IS-G-027-18	Հոգեբանություն	6
4.	IS-Q-060-18	Քրեական դատավարության և քրեական իրավունքի ընդհանուր դրույթներ	6

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IS-J-019-18. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը, Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողի վարքագծի կանոնները, կադրային քաղաքականության առանձնահատկությունները: Մասնավորապես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքների, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության վերաբերելի իրավադրույթները:

2. IS-G-026-18. Գործավարությունը, վարրչարարությունը, գաղտնիության ռեժիմի պահպանումը, արխիվային գործը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտում փաստաթղթաշրջանառության հիմնադրույթների և ընթացակարգերի, վարչարարության իրականացման, գաղտնիության ռեժիմի պահպանման և արխիվային գործի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է Կոմիտեի դեպարտամենտում գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության <<Mulberry>> համակարգը, դեպարտամեենտում վարչարարության իրականացման հիմնական կարգավորումները, գաղտնիության ռեժիմի պահպանումը: Մասնավորեպես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են նշված հարցերի վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի, այդ թվում ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի համապատասխան ներքին ակտերով սահմանված վերաբերելի ընթացակարգերը:

3. IS-G-027-18. Հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների կողմից պաշտոնական գործառույթների առավել արդյունավետ իրականացման համար:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդներն ու կարողությունները:

4. IS-Q-060-18 Քրեական դատավարության և քրեական իրավունքի ընդհանուր դրույթներ

Դասընթացը ուղղված է Կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների կողմից պաշտոնական գործառույթների առավել արդյունավետ իրականացման համար քրեական դատավարության և քրեական իրավունքի ընդհանուր դրույթների վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը:

Դասընթացը ներառում է քրեական գործի կարճման, կասեցման, քրեական հետապնդման դադարեցման հիմքերը, քրեական դատավարության նախնական քննության փուլերը, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները, ներառյալ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, պաշտոնեական լիազորությունները անցնելը, պաշտոնեական անփութությունը, ապօրինի հարստանալը, կաշառք ստանալը, կաշառք տալը, կաշառքի միջնորդությունը, պաշտոնեական կեղծիքը, իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելը և այլն: